

շինի մէջ իր գորշ մազերը, և իր օրհնական աչքերը կը վերցընէր առ թաղաւորը:

«Ո՛հ, ուրեմն դուն իմ ձեռքէս կը մեռնիս, կ'աղաղակէ փնիղալ՝ ճանշնալով՝ զանի, ա՛յ բարեկամս Ազանդեկկայի: Տեսայ ես քու արցունքներուդ հոսիլը իմ սիրուհիիս հասմար՝ արիւննուշտ Ստարնոյի կամարներուն առկէ: Թշնամի եղար դուն սիրուհիիս թշնամիներուն, և իմ՝ ձեռքէս է որ կը մեռնիս: Բարձրացուր, ա՛յ Ուլլին, բարձրացուր Մաթնի որդւոյն գերեզմանը, և խառնէ՛ երգերուդ մէջ իր ածունը Ազանդեկկայի անունին հետ, այն կոյսին՝ զոր կը սիրէի և զոր կուլամ՝ տակաւին մէջն գիշեր»:

Կրողայի անձանկներուն խորէն, կը լսէր Կուկուլլին պատերազմողներուն շոնկն ու շառաչը: Կանչեց կորովի Կոնալն ու ծերունի Կարրիլը: Իր ձայնին՝ երկու ալէծաղիկ դիւցազները առին իրենց աէգերը: Առաջ զացին և տեսան հեռունէն պատերազմին արիւնը որ կը ծփար նման մրկակոծ ալիքներուն, երբ ծովուն հովերը կը թաւալեն իրենց առջեւն ապի ջուրին ծփանքները՝ ափունքին աւազներուն վրայ:

Չայն տեսնելով, կը բողբոջէր Կուկուլլին և կը պարստէ յօնքերը. իր ձեռքը կը բռնէ և կը ծօծէ իր հայրերուն սուրը. իր աչքերը՝ մահուան փայլակը կը շանթեն թշնամիին վրայ: Երբեք անդամ կ'ուզէ վազել դէպ ի մարտ, և երեք անգամ Կոնալ կը զսպէ անոր եռանդը:

«Ո՛վ Մառախուղներու կզդիին պետդ, կ'լսէ անոր, Փնիղալ կը յաղթանակէ. մի ջանար իշխ մաս մը անոր փառքէն, ան կ'աւերէ և կը պերիէ փոթորիկ նման:

— Լաւ ուրեմն, Կարրիլ, յարեց Կուկուլլի, գնա ինդակցելու Մորունին թագաւորին: Երբ Լիկինի բանակը ցրուի ինչպէս հեղեղը անձրեւէն ետքը, երբ լուսնիւր թագաւորէ պատերազմի դաշտին վրայ, գնա... Թող քու քաղցրանուագ ձայնդ լսուի փինգալէն և երգէ իր զովեսաները: Տար իմ կողմէս Կայիթբատի սուրը. վասն զի Կուկուլլին արժանի չէ այլ եւս իր հայրերուն զէնքերը կրելու:

«Ո՛վ մեծակեաց ստուերներ Կրողայի,

վախճանեալ դիւցազներու ողիներ, այսուհետեւ Կուկուլլինի ընկերները եղիք, և խօսեցէք անոր երբեմն այն անձաւին մէջ՝ ուր կը ծածկէ ան իր վիշաւը: Ոչ, ալ նշանաւոր պիտի չլլայամ՝ երեւելի մարտիկներուն մէջը:

«Փայքեցայ լուսեղէն ճառագայթի մը պէս, բայց անցայ անոր նման, անհետացայ նման շողիներու՝ զոր կը ցրուեն հովերը, երբ արշալույսը կու գայ բլուրները լուսաւորելու: Կոնալ, ա՛յ մի խօսիր ինծի զէնքերու և պատերազմներու վրայ. մեռաւ իմ փառքս:

«Միտա բարով, կ'երթամ հեծել հեռուն մինչեւ որ ոտքերուս հետքը ջնջուի երկրէն... Եւ դու, գեղեցիկ Իրապել, լաց համարախ կորուսար. վասն զի երբեք պիտի չկառնամ ճեղքի, յաղթուեցայ»:

Փարգմ. Հ. ԱՐԻՆ ԳԱՅԻԿԻԱՆ



ՀՈՈՄԱՅ ԱՒԱՐԱՌՈՒԹԻՒՆԸ

ԳՈԹԱՅ ԱՋԳԵՆ

410 ՏԱՐԻՈՅՆ ՄԷՋ

(Շար. տես յէջ 410, 1901)

ԱՒԱՐԻԿՈՍԻ յայտն պարապի ելաւ. այն օրերն հոռու էր Ռափնենա Սարոս դռնացի նշանաւոր զորավարն, որ մահու չափ կ'ատէր զԱւերիկոս, և երեքհարիւր կարիճ զինուորներով յանկարծակի բերելով Առաւելիոսի զօրքն՝ բաւական ջարդ տուաւ: Իմացաւ թագաւորն որ կայսերական արքունիքն կ'ուզէր ժամանակ վատակել, և վրէժնորդութեան ոգով լեցուած՝ Ռափնենայէն հեռացնելով բանակը, քշեց տարաւ երազութեամբ դէպ ի Հռոմ, ցաւելով այն չափ երկար ժամանակ Իրաւաբահութեան անօգուտ և անարդէն փարձերով վատնեալն համար:

Քաղաքին մերձակայ բլուրներէն Հոնք և Գոթք այնպաշտեամբ կը նայէին, անհամբերաբար կը սպասէին աւառաւորեան ժամին հնչելուն, և թագաւորն փոխանակ խաղաղութեան զանգեք, առաւել եւս կը զրգարէ: Վատի կանի շրջանակին մէջ, որ իրենց առջեւն էր, վայրագ մարտիկները կը տեսնէին Ս. Պետրոսի

մայր եկեղեցին, և դէպ ի տւելի վեր, Տիրե-
րիս Կաթանց վրայ կը նկատէին Ս. Պօղոսի
մայր եկեղեցին, որ միայնակ կանգնուած էր:
Զօրավարները կ'ընէին զօրքին որ երկու զլիս-
ուր Առաքելաց որավայրաց ուկույ և արծաթի
հարստութիւններուն հրաման չունէին զպե-
լու. ունեցմէ զստ Հռոմայ մէջ գտնուած ա-
մէն գանձերն իրենցը պիտի ըլլային, երբ պա-
րիսպներէն ներս արշաւէին: Հիացմամբ կը տե-
ւեռէին Գոթք աշգերներն բուրգերուն և ռկե-
զօծ արձաններով զարդարուած սիւներուն և շքեղ
տաճարներուն. չին և գեղեցկայնէն տա-
ներուն, գեղապանծ թաղանձներուն և կրկե-
սին՝ որ կարծես հասակն գէպ ի երկինք կը
սլաղընէր, և ընդարձակ բաղանջներուն, որ
հովանաւոր կամարակապ գաւիթներով և լայն
մարեթներով կը փալլալէին արեգական ճա-
ռագայթներէն և ականաւոր և աշնուտառճմ
անձանց հակայաձեւ պալատներուն, որ քա-
ղաքին մէջ անհամար փոքրիկ քաղաքներ կը
թուէին: Եւ պարկեղաց իրենց նեւաւոր երկեր-
ներուն մէջ հռոմէական հարստութեանց վրայօք
առաջադեմանման ճոխարանութիւններ լսած ըւ-
լալով իրենց հայրերէն, թափեցն աննանք մի
կը զգային փութալու Ստփելու այն փարթա-
մաթիւնութեան վրայ: Մէջերին յատեր կային
որ կը յուսային այնչափ մարգարիտ և գոհա-
րեղէններ ձեռք ձգելու և որ փոխանակ համբե-
լու՝ կը պատրաստուէին զորհնի պէս կշռելու,
և ոսկէն անթմենքն և մեծագին օրդազան ոպառ-
ներն կառքերու մէջ լեցընելու և անանկ փո-
խադրելու կը մտածէին:

Այն ատենուան Հռոմայ վրայ վիճակագրա-
կան տեղեկութիւնք բնուս փնացած չին: Այս-
չափ միայն գիտենք, որ Հռոմայ տասնըւորս
թաղերուն մէջ՝ գտնէ 45,000 տուներ կային,
և 4,700էն անելի պալատներ: Բնակչաց թիւը
չստ պակասած էր՝ կայսերութեան բաժնուելէն
ետքը, և 300000 հօգոյ չէր հասներ:

Գոթացիք Հռոմայ ամէն դռներուն տուէն բա-
նակ զրին: Ալարիկոս բաւր իր ոյժի կը պատուա-
տուէր թափելու Սալարեան դրան վրայ, որ
մօտ էր Բիւնդիս ըլլոյն և որուն պատուաւոր
ներն տկարագոյն էին. և իրեն վրանը հոն դուռ և
Պատմաթիւնէն տեղեկութիւն չունէին թէ որ-
չափ տեւեց պաշարուիմը: Անանկ կ'երեւի որ
Ալարիկոս անելորդ սեպած է ընդհանուր յար-
ձակուելով ամենի քաղաքը. որովհետեւ յաջո-
ղած էր Հոգոմայ մէջ գտնուող հեթանոսներուն
և արիստեան թրիստաններուն հետ զաղտնի
գաշխնք զննելու: Երեսք պատրաստ էին օգնելու

իրեն. միանգամայն ապահով՝ որ որոշ օրէ օր
սասականաւոր, անհնար էր որ քաղաքացիք
զիմանային, թէպէս անթիւ բաղաճութիւն գե-
րիներու քաղաքն ելած և գոթացիներուն դե-
մեր էին:

Ամենահաւանական կ'երեւի որ 410 տարւոյն
Օգոստոսի 24ին գիրըր Գոթացիք մտան թա-
փանցեցին ի Հռոմ Սալարեան դռնէն: Հազիւ
քանի մի գունդ ոսք կոխեցին քաղաքին մէջ,
անմիջապէս կրակ տուին դրան մօտ եղած տու-
ներուն: Հրդեհին փութով ծաւալելով նեղ և աղ-
տեղի փողոցներուն մէջ, նախ և առաջ լափեց
Սալուստիոս հաշակաւոր պատմաբանին գեղա-
նի պալատը: Առաջին բոցերն տեսածուն պէս
Հռոմայեցիք, վախերէն յիմարած՝ փախչող
փախչող եղաւ: Մերկայոյց փոթորկի արագու-
թեամբ բարբարոսներն սփռուեցան Հռոմայ բո-
լոր թաղերուն մէջ. և փախչողներուն պաղա-
տանքին մօրիկ լընելով՝ հանդիպածին կը ջար-
գէին: Յետոյ սկսան աւարի տանուլ ընդարձա-
կածաւոր քաղաքը: Կողոպտելու գաղտնական
բնազգումար մի մղուած և, պալատէ պալատ կը
զիմէին, կը յարակէին եկեղեցիներու վրայ,
կը մանէին բաղնիքները, կը զրոհէին տաճար-
ներուն մէջ, ամեն բան կը քանդէին կը կոր-
ծանէին ոսկի գտնելու համար, և գողցուած ե-
րագութեամբ՝ որտառաքի կը բեռընէին աւար-
ներն ձիերու և սայլերու վրայ, և անհաւատա-
լի հապենպով քաղաքն զուրս կը քաշէին կը
տանէին: Հոնապ առաջին գործն էր տաներուն
մէջ գտնուած անուշահամ գինիներն խմել
մինչեւ ցոտաթիկ զինուածութիւն, առով աչքեր-
նին դարձած՝ չէին ըմբռներ և չէին ուշադրու-
թիւն ընել առկելուն ելած կահկարասեաց և
զարդեղէններու ընաշխարհիկ գեղեցկութիւնը
և օսքի կրկան կ'ընէին՝ ջարդաբուրդ ընելով,
կոտորած մանր արձանիկներէն և արդուար-
դերէն ոմանք Աղեքսանդրիոյ ճարտարաւեստ-
ներէն յօրինուած էին, մէկ մասըր Յունուս-
տանի գեղեցկաւեստից սակեղին դուռն և ձեւա-
կերտքն էին, և մի մասն ալ Հռոմայեցի ստա-
րիկներուն նախահարքն աւարած բերած էին
Պալմիրայէն: Ասորեստանէն և Պարսկաստա-
նէն: Կը զօշնային առանց զողջածունէ զնիւր
զիտնաւու, նիւթին միայն կը նայէին և ոչ ա-
րեւեստին: Կամ Հռոմայեցիներ անշուշտ իրենց
հարստութիւնները պահած էին պաշարման ա-
տեն, և այս մարդադճմ զաղաններուն ձեռքէն
սղտուելու: Որով զարեղէն ետքը՝ Հռոմա ելաւ
թէ անթիւ անհամար գանձեր թաղաւոր են
Հռոմայ հողուն մէջ: Սակայն Հռոմայեցիներ,

բուն մեծ մասնը, կամ մահուան վտխէն, կամ իրենց փախստական գերիններուն մատուռ-թաղմբը, և կամ տանջանքներուն ցաւէն՝ ըս-վանդակ հարստութիւննին թողուցին առաջ-տակողներուն: Չկար քաղաք մի ամբողջ աշ-խարհի մէջ, ուր բարբարոսաց զամբարտակ-ները կարենային այնչափ անչափ կողոպտու-զանել: Ուրիշիդոսը ժամանակակից պատմագի-րը կ'ըսէ թէ ոչ Հռոմայեցիները կրնային դու-շակել այս աւարին քանի անչափ, անկշռելի, անբաւ և տարապայման ըլլալը. և կ'անցընէ թէ՛ չորս տարի ետքը, Պլակտորիս իշխանուհին (Սնորիոսի քայրը) անշուշտ ամօթէն գետինն անցաւ, երբ յիսուն զօրիացի երեսասարդներ մետաքսէ պատմանաններ հագած՝ նուիրեցին իրեն՝ ժպտելով՝ հարիւր մեծ բաժակներ լցուած սկիզդէն զարդերով և զհարեւելինօք, զբրոնք ամէնն Հռոմայ աւարառութեան աստեր կապ-տած էին իշխանուհւոյն հայրենիքէն:

Լիուլիս իշխանութիւն տուած էր Ալարիկոս իւր զօրքին կապտելու. կողոպտեալն, սակայն պատուիրած էր որ բնակչաց կենանքին չդժգին, և հրամայած էր որ ո՛ր և է ցեղէ և աստիճանէ անձինք ապականելին եկեղեցիներուն մէջ, և մասնաւորապէս Պետրոս և Պօղոս զլիսաւոր առաքելոց որբավայրերուն մէջ, ոչ ոք կարենայ դանսնք նեղել: Որչափ որ կողոպտելու մտեղ-նութիւնն և արեքցութիւնն թոյլ կու տար, այնչափ միայն հնազանդեցան Գոթիացիք այս հրամանին: Երբ տուններ կը կսխէին՝ ոսկւոյ խոտով, և զմիացնին աղքատին զգեստներով զողջըզցոյց տնուորներ կ'ելնէին, յարձակող-ներուն բարկութիւնը կ'աւելնար համարելով որ զձուռ զգեստներն՝ հարստութիւնը ծածկե-լու պատրուակ մի էին: Ս. Հերոնիմոս իր պատ-մէ ցաւագին որ Մարկիլլա կոյսն, իւր հոգե-տէր բարեկամու հին, որ հռոմայցի առաքին աղ-նուական առհմէ մայրապետն եղաւ, ցրուց յարակողներուն իւր խեղճուկ կապան՝ նշա-նակ ապաշխարութեան, անգութները չողորմե-լով՝ զաւաղաներով և խորազաններով հա-րուածեցին անխնայ, մինչեւ գետինն ինկաւ զլորեցաւ կոյսն իրեն անշունչ՝ հարուածմե-րուն աստուկութենէ: Ետքը ոյժ տալով ինքն իրեն, եղաւ հարուածողներուն առջն ինկաւ և դառն արտասուքով պաղատեցաւ որ իւր Պրիւ-կիպիս (իշխանոսին) աշակերտուհւոյն անմե-ղութեանը չզպլին: Փարեզէն որտեղն հուսկ աւելնի ի զուրկ շարժեցանդ և տարին երկու սրբասուն կուսանքն Ս. Պօղոսի եկեղեցին և ապագայ վտանգէն աշտուցին: Կուսակրօն

Մարկիլլան Հռոմայ պաշարումէն քիչ օր վեր-ջը մեռաւ: Այս գալլանման բարբարոսներէն ամանք՝ և ոչ մայրապետներուն վանքերուն խնայեցին, հազիւ զսպեցին իրենք վերենք՝ քրիստոնէից եկեղեցիներուն մէկ մօտին սուրբ անօթները չյափշտակելու: Իւնիկեփորոսպառ-մարանը կը զրուցէ՝ որ եթէ տեղեկութիւն ու-նենային Ս. Պետրոսի մէջ ամբարուած գանձե-րուն, անտարակոյս կը գերէին կը գերփէին: Իննովկիւնտիս պապն, որ այն տտեն ի Ռա-վեննա էր աստուածային մասնաւոր հրաշքի կը վերադարձր Ս. Պետրոսի եկեղեցւոյն ապառ մնալը՝ բարեխոսութեամբ առաքելապետին:

Ուրիշ մայր եկեղեցիներ Նոյն բաղը չունե-ցան: Ս. Յովհաննէս Լատերանի եկեղեցին յափշտակուեցաւ արծաթի թանկուղին ամպհ-վանին: Նոյնպէս Պրատէվէրէի Ս. Մարիամ մայր եկեղեցին կողոպտուեցան շատ մի ծան-րագին որբազան սպաններ: Եւ հասանորէն շատ ուրիշ եկեղեցիներ ալ նմանօրինակ արժէքով կորուստներ ունեցան:

Այս արտափելի արկածներուն ժամանակ, որտաշարժ դէպք մի պատահեցաւ: Գոթիացի մի մտաւ հոգեւոր օրհորդի մի տունը, որ միայ-նակ, առանց պաշտպանին, որբազան անգին տղասներու մեծ կոյտի մը պահպանութիւն կ'ը-նէր: Երբ բարբարոսն յարձակելու վրայ էր ճիւղ կողոպտութիւն վրայ, օրհորդն վտեմ հան-դարտութեամբ ըսաւ անոր. « Ինչ կ'ուզես ըրէ այս գանձերուն. բայց գիտնա՛ որ առանց տէրի Ս. Պետրոսն է, և ինքը պիտի պատմէ իրեն սպառուց ձեռք զպցընողը »: Սարսափեցաւ բար-բարաբը և վազեց զնաց Ալարիկոսի և պատ-մեց եղածը: Թագաւորն հրամայեց անոր որ Առաքելոյն այս որբազան գանձերն փոխա-դրուի ի Ս. Պետրոս եկեղեցին միանգամայն քանի մի զինուորներով գանսնք պահպանող օրհորդն ալ հոն տարուի: ապահովուի: Այս վայրենիներն յարգանք սկսան տանիլ դէպ ի յիշելու մայր եկեղեցին սկիհները, մաղձամե-րը, կանթեղները և խաչերն որոնց վրայ կը շողջողային զմրուխտներ և յակիրթներ: Հեռ-զհեռ մարդիկ միացան տանողներուն, և թա-փօր մի ձեռացաւ Փախչող քրիստոնէսներ, ար-տափաշար կանայք՝ իրենց մատաղջ տղաց ձեռ-քէն. բռնած, զոդջողն ծերեր, և շատարած կռապաշաներ ճամբանին փոխելով՝ այս թափո-րին հետեւեցան, սրաւն ճամբայ բացողներն էին արեւնապանի զգեստներով և զէնքերով աղ-տեղած բարբարոսներ, որոնց որսին մէջ կը պատերազմէր կողոպտելու անյազուրդ ցան:

կուսիներն և կրօնական երկիւղը Այս խումբ թաղութիւնը կը դիմէր զեպ ի Ս. Պետրոս, անցնելով ահաւոր աղաղակներու և ջրադի ու աւարառութեան եղբարկան սեռարաններու մէջէն. և գտնի ու ախուր արարական երգով մի կը ջանային հաստատացնել տիրել կոտորածին վայնառաններուն: Աւուր չափք իրականմբ այս սիրալի զեպքն՝ քրիստոնէական յաղթանակ կը հաւակեն:

Մինչև հիմա ըսածներէս ընթերցողք հառկցած են որ Հռոմայ վրայ յարակող ազգերէն Գոթացիք քրիստոնէակ էին այլ քրիստեան հետախիւս. իսկ չոքք, Սկիւսայք և Ալանք՝ հեթանոս էին: Արիստեան ազադէնուն համար աւելի ըլլալով Հռոմայեցիներուն, սխերհին կ'ուզէին հանել Հռոմէն. և իրենց հին պարտութիւններն ալ յիշելով, առաւել ետ կը զբըզուէին, մանաւանդ տեսնելով Հռոմայեցաց արդի արհամարհելի վիճակը: Այս շորս ազգերուն որոյն տակ հաղարաւոր մարտիկ ջարդուցան Հռոմայ մէջ և պարտակցերէն դուրս, և ազատուած բարբարոս զերիներն ալ ոչինչ ընդհատ յարակողներէն կատաղութեամբ կոտորածին կ'օգնէին: Ս. Օգոստինոս կ'ըսէ թէ գիականքը թաղելու մարդ չէր բուեր:

Բայ ի Սալարեան դրան լայնածաւալ թաղէն, Գոթացիք այրեցին և աւերակցին Էքզուիլէնան թաղին մէկ մասնը. անկից առաջ զհացին մինչև կելիս Յիւրոյն թաղը: Այն կողմերն այրեցին մեծ վաճառանոցը (Macellum magnum ըսածաւր), ուր յետոյ կանգնուեցաւ բուրդի Ս. Ստեփանոս (S. Stefano Rotondo) նշանաւոր եկեղեցին: Կոյնիւց այրեցին վաղեմանց պանծալի և փառաւոր պալատը, որուն աւերակներուն վրայ յետոյ ստորանոց մի շինուեցաւ:

Եթէ Աւարիկոս քիչ ժամանակ առւած ըլլաւ իր շորքին, այս անպատմելի աղէտներն ստատկազոյն պիտի ըլլային: Անտարբեր շննաց բարբարոս թաղաւորն այս անկկարագրելի խոզտութիւններուն. միտքն եկաւ Հռոմայ անցնել մեծութիւնն և ներկայ նստառութիւնը, մտքով կենդանացաւ կոթաղներուն վրայի հին գիւցադաններուն կերպարանքները, և վրդովմն ու զոգումն եկաւ վրան: Յիշեց նաեւ զՍտիրիկոս, որ եթէ ողջ մնացած ըլլար, չէր կրնար ինքն առք կախել ի Հռոմ, բաւական տեղից իրեններուն կրած տարած կապուտ կաղաղաւոր մանաւանդ որ Հռոմայ ընտկութիւնն՝ ապահով բանակատեղի մի չէր իրեն համար, և մերկացած քաղաքացիներէն ալ ոչ ապրուստ,

ոչ զրոտ կրնար քաղել: Նաեւ ըմբռնեց որ հռոմէական կայսրութիւնն զհեռու այն ստորեւանի քաղաքացի չէր որ միայն Հռոմայ ստամբը՝ կարող ըլլար ընկենել բուրք պետութիւնն և ինքզինքն Խառլոյ թաղաւոր անուանել տալ: Ուստի իւր անկարծելի յաղթութեան մեծութենէն զուշակելով անոր խախուտ ըլլալը, երեք օրուան աւարառութենէն և աւերածնէն ետքը թողուց Հռոմը, և բանակը փոխադրեց ի Կամպանիա, անբաւ թաղութիւն գերիներու տանելով հետը: մինչև անգամ Պալատիա իշխանուհին, որուն պարտ ու պատշաճ մեծարանք կը մատուցանէր:

Ժամացաւ երթին ետքը, կրցան կոտորածն և գերութենէն ազատող Հռոմայեցիները չափել հասկնալ իրենց թշուառութեան քաղաքութիւնը: Թշնամի զորք չկար. տերութեան փոփոխութիւն եղած չէր. ռակայն անզուսներուն սարսափեցուցիչ հետքն ամենուրեք արեան տաներով դրոշմուած էին: Ոչ թէ մարդկային ձեռքի հարուած կը թուէր, այլ տարեաց համայն աւեր զարդում և յեղափոխութիւն մի, որ քանզի քաղաքներ էր քաղաքը: Պատմագիրներէն և ոչ մէկը համարձակած է Գոթաց քոտուցած օրուան աննկարագրելի վիճակը ստորագրել: Հրեհնը ամենամեծ վնաս ըրած էր. բեւազանցաբ Սփրաաէն պատմագիրը կ'ըսէ թէ Հռոմայ հրաշալի ձեռակերտներէն զրեթէ մեծ մասը կրակին զոհ եղաւ: Փիլոսոփոսիս կը պատմէ թէ Մաւրիկոս կործանած թողուց քաղաքը: կրակով, որով և գերութեան շղթաներով ոչնչացնելով լայն: Ս, Հերոնիմոս կ'ազաղակէ. « Եղուի ինծի, մի միայն հրեհն մի մաշեցուց. հաշակաւոր քաղաքն որ հառմեական ինքնակալութեան զուխն էր ոչ Ս. Օգոստինոս իր դրամածներուն մէջ մէկ քանի տեղ կը յիշէ ախուր քաջատրոյ թիւններով Հռոմայ կրակը իսկ Որոգիոս ժամանակակից մատենագիրը, կը զրուցէ թէ « Աստուած իր արամաութեամբ բարբառած անցած էր Հռոմայ վրայէն և մարդկանց հարուածներէն ցածրակազոյն հարուածներով պատժած էր պոռկկայ. վասն զի գերմարդկային զօրութիւն մի վառեր էր պղնձի գերանները և մեծամեծ շննքերուն և ապաւաններուն յաղթանալով անգոստածները հողաթաւալ ըրած էր, և կայտալի իջնելով ի Փոթոն (Forum, մեծ հրապարակն ի Հռոմ, որ էր տաճարներով), խորտակեր փշրեր էր կուռքերը, և երկնային հուր մի ճերմանոսական հին պղծութիւններն բախեր անհետացուցած կ'ըսէ զոր

թշնամուտն բորբոքած բոցերը չէին կարողացած սպառել ընկել ու :

Արդի լուրջ պատմապետք քիչ մի չափազանց կը համարին ըսել թէ Հռոմայ ամեն հոյակապ յիշատակարանները համանպասխան կործանած ըլլան : Եւ փաստ կը բերեն աւարառութեան երեք որ միայն տեսելը : Հռոմայ տարորինակ ընդարձակութիւնը, և մեծամեծ շէնքերուն բազմութիւնը : Ցարակոյտ չկայ որ բարբարոս հրոսակները հեղեղօրէն վազած են հսկայապէրալ շինուածոց վրայ, այլ ո՞ր թէ քանդած են ըստզեղն և յաղթական կամարները, վասն զի, ըստ կարծեաց յիշելու հնախօսոց, աւար ժողովրէն ու փոխադրելէ դատ՝ չէին կրնար երեք տոռան մէջ բաւոր շէնքերն ալ վար առնելու ժամանակ գտնել : Ոսկիէ և արծաթէ արձաններ եթէ գտնէին, մէկէն վար կ'առնուին, կը փշուէին և սալերուն մէջ կը բեռցընէին, իսկ պղնձէ հոսքէ արձաւար արձաններն և մարմարային անդրինները չէին հրապուրել շինքի, շունենալով բնու գեղարուեստից ոչ և Թաթարներն :

Յաւալին և Կափշեյին այն է՝ որ ողբէ ձայն մի, հառաշնառած արձապանց մի, արցունք և հեծութիւն մի հռոմայեցի կուրծքերէն և աշտերէն զուրո ցայտելով և զոր զորշմուշելով չէ հասած մեղի : Եղբայր անզգայացած էր նոյն ժամանակ այս ժողովուրդն, այդ չափ կարնցուցած էր իր հին փառքին յիշատակը : Մինչդեռ Գրիստոսն երկու դար առաջ՝ մեծն Սկիպիոն Վարքեզոնի աներակներուն վրայ նստած, կ'ողբար իր հայրենեաց՝ Հռոմայ ազազայ անկմանը վրայ :

Երբ ամենքը կը լռէին, և անպատասխոր մի, Ս. Հերոնիմոս. որ ի Հրէաստան քաշուած՝ Բեթլեհէմի մէջ կը ճգնէր, շտեղծ Հռոմայ անկումը, այսպէս կը զրէր խորին ցաւով առ Եւստորիս կոյրը. « Տասնըութ զրբի բաժնած մեկնութիւն զրբի էր Եսայեայ մարդարեութեան վրայ, և կը պատրաստուէին Եղեկիելի վրայ աշտանելու, ինչպէս որ շատանց ի վեր խոստացած էր քեզի, ո՞վ Եւստորիս կոյր քրիստոնեայ, և բարեպաշտան ժողով Պաւլայի, և ահա լռեցի Պամաքիոսի և Մարկելլայի մահուան դաժնի և Քաղքին առման բոլոր, և բազմութիւն հոգեհարազատ եղբարց և քոյրերու սպանութիւնը : Ինքզինքն կորնցուցի, ձայն ինչպէս քաշուաւ, և զիշեր ցորեկ ուրիշ մառմանէն չունեցայ՝ բայց եթէ ինչպէս անոնց օգնութեան հասնիմ, և կը թուէր ինձ որ ես ալ դերութեան մէջ ինկած եմ : Որովհետեւ աշխարհիս ճաճանչաւէտ լոյսն

արդ մարեցաւ, որովհետեւ հոռոճական կայսերութեան զլուխն խղեցաւ մարմնէն, և լուսազոյն ըսելով. որովհետեւ Հռոմով բաւոր աշխարհը կորաւ, մահն և համար կտրեցայ և այն. պիտի վհատութիւն եկաւ վրաս, որ բարւոյ զործանէութիւնը գնաց ինձէ. և ցաւս անդադար կը նորագոյն և սիրտս ուժգին կը բաբախէր և կը կարծէր թէ միտքս բոցերով լըրջուպատած էր ու :

Հերոնիմոս, որ աշխարհային մեծութեանց հոգերն թողնով ինքզինքն Առաստուծոյ ծառայութեան նուիրած էր, և առանձնանալով յԱստուծոյ մերձ յիշուապէս, շփոթալով իր հայրենեաց թշուառութեան վրայ, կ'ըսէր. « Ձայնս կարսնցուցի, և կը փշկիմ հեծկլտանքով, երբ կը յիշեմ որ ընկճուած է այն քաղաքն որ համարէն աշխարհի տիրեր էր » : Իսկ անդին, իստկոյ մէջ, Հռոմայ մօտ, կայր մի Պերիոս, որուն աթոռ և մայրաքաղաքն աղէտալի կ'ըլլաւ ժամանակէն երբ, և որ ամեն մարդէ աւելի պիտի զգար այս անգարմանելի ճախողութեան ծանրութիւնը, երբ չըլլապատուած ներքինի պաշտակաւաններէ՝ լսեց Հռոմայ արկածը, կարծեց թէ իր սիրտ մէկ հաւն մեռեր է, որուն անուն զրած էր ինքը՝ Հռոմ, աշխարհիս մայրաքաղաքին անունը : :

Հռոմայ աւարառութենէն քիչ վերջը մեռաւ Աւարիկոս, նոյն 410 տարւոյ մէջ :



ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵՍԵՑ

1812-1879

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ Ռուսահայոց մէջ 1858էն վերջը փայլ տուաւ, թէպէտ Կովկաս (1846-8) և Արարատ (1850-1) իրենց կտրճատեւ կենտոյց մէջ անոր զաղափարն ու ճաշակը տուած էին. սակայն ոչ նոյն գիտական և ոչ ժողովրդական ուժգին մղու մը պատճառեցին ինչ որ մի և նոյն ժամանակ հրատարակուիլ սկսող Ճաշաքաղ, Միգրոս Հայաստանի և Հիսիստփայլ թերթերը : Մենք պիտի խօսինք վերջնոյն և անոր մեծապատիւ խմբագրին՝ Ստեփանոս Նազարեանցի վրայ :